

ԸՆԴԵՐՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԱՇՈՏ ՄԱՐԴՈՅԱՆ

Ընդերքը ասելով հասկանում ենք երկրակեղևի վերին հատվածը, որի սահմաններում ժամանակակից տեխնիկատեխնոլոգիական բազայի առկայությամբ հնարավոր է օգտակար հանածոների արդյունահանումը: Ընդերքը պարունակում է հանքային միացություններ, որոնք զարգացած տնտեսություն ունեցող երկրների համար զարգացման հիմնական նախապայման են համարվում:

Ըստ առաջադրվող «Ընդերքի մասին» ՀՀ նոր օրենսգրքի՝ «Ընդերք է համարվում հողածածկույթից ներքև, իսկ հողածածկույթի բացակայության դեպքում՝ երկրի մակերևույթից, ջրավազանների կամ ջրհոսքերի հատակից ներքև՝ ըստ խորության տեղադրված երկրակեղևի մաս, որը մատչելի է ընդերքօգտագործման համար»¹:

ԽՍՀՄ-ում ընդերքի հետ կապված հարաբերությունների կարգավորումն իրականացվում էր «Լեռնահանքային օրենսգրքով»: «Ընդերք» հասկացությունը, որպես պետական սեփականություն, ընդգրկում էր բացառապես հետևյալ կետերը. բոլոր գործարքները, որոնք խախտում էին ընդերքի ուղղակի կամ անուղղակի ձևով պետական սեփականության ամբողջությունը, համարվում էին ոչ օրինական: Ընդերքը ենթակա էր օգտագործման միայն պետության, կոոպերատիվների, հասարակական ձեռնարկությունների և քաղաքացիների կողմից: Ընդերքի օգտագործումը, ինչպես նաև յուրաքանչյուր տնտեսական կամ այլ գործունեություն թույլատրվում էր միայն պետության կողմից, որն իրավունք /լիցենզիա/ էր տալիս և հետ վերցնում, օգտագործողների համար սահմանում էր կանոններ ու պարտականություններ, ինչպես նաև դրանց նկատմամբ իրականացնում պետական վերահսկողություն: Օգտագործողները իրավունք չունեին ինքնուրույն, առանց պետության թույլտվության, ընդերքի շահագործումը փոխանցելու երրորդ անձանց: Նշված կետերը խախտողները ենթարկվում էին կարգապահական, ադմինիստրատիվ, քրեական և վարչական պատասխանատվության²:

Վարչահրամայական տնտեսակարգում չկար հողավճար՝ այդ թվում նաև ընդերքօգտագործման համար: Դա բացատրվում է մի քանի հանգամանքներով: Ժամանակակից ընդերքօգտագործմանը վերաբերող գրականությունում բացակայում է հստակ տեսություն ռենտային հարաբերությունների և հաշվարկման մեթոդաբանության վերաբերյալ: Խորհրդային Միությունում ռենտային խնդիրների ուսումնասիրությունը, որպես կանոն, սահմանափակվում էր միայն գյուղատնտեսական ռենտայով, իսկ կիրա-

¹ «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի /ուժի մեջ է մտնելու 01.01.2012 թ./:

² Տե՛ս Шакленин С., Рогова Т., Оценка риска пользования недрами, „Кемерово“, 2009, էջ 8:

ռական հետազոտություններում հողային ռենտան դիտարկվում էր միայն գնագոյացման և գյուղատնտեսության բնագավառում ռենտային վճարների սահմանման տեսակետից: Ռենտային խնդիրների տեսական ու մեթոդաբանական հետազոտությունները և ռենտային հարաբերությունները դարձել են առավել նշանակալից՝ կապված ՀՀ-ում շուկայական տնտեսակարգի հաստատման, բնական ռեսուրսների սեփականության սահմանափակվածության և ընդերքօգտագործման ոլորտում վճարելիության սկզբունքի սահմանման հետ:

Պետության՝ որպես ընդերքի սեփականատիրոջ և օգտակար հանածոների օգտագործողների միջև առաջանում են ռենտային հարաբերություններ, որոնք տնտեսագիտության տեսությունում դեռ չեն ստացել համապատասխան մեկնաբանություն: Փաստորեն, ստեղծվում է անորոշ իրադրություն՝ կապված ընդերքօգտագործման բերած եկամտի բաշխման և վերաբաշխման հետ:

Սոցիալիստական ճամբարի այլ երկրներում ընդերքը նույնպես համարվում էր պետական սեփականություն, սակայն «ընդերք» տերմինը օրենսդրության մեջ չէր գործածվում:

Չարգացած երկրներում (օրինակ՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Ճապոնիա) այն ամենը, ինչ գտնվում է երկրակեղևում և ենթակա է օգտագործման, որը կապված չէ օգտակար հանածոների արդյունահանման հետ, պատկանում է հողի սեփականատիրոջը: Այդ հանքատարածքներում կազմակերպությունների և այլ անձանց կողմից արդյունահանումը կարող է իրականացվել միայն հողի սեփականատիրոջ համաձայնությամբ: ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում օգտակար հանածոների սեփականության իրավունքը նույնպես պատկանում է հողի սեփականատիրոջը (բացառությամբ որոշ օգտակար հանածոների, որոնք պատկանում են պետությանը): Սակայն այդ իրավունքը կարող է փոխանցվել երրորդ անձանց՝ անկախ հողի սեփականության իրավունքի պատկանելությունից: Օգտակար հանածոների արդյունահանումը գտնվում է պետության վերահսկողության ներքո: Գերմանիայում, Ֆրանսիայում, Ճապոնիայում դրանց որոնողական աշխատանքների և շահագործման իրավունքը պատկանում է պետությանը և իրականացվում է միայն պետության թույլտվությամբ³:

Ընդհանրապես, բնօգտագործման գործող համակարգը ներառում է հետևյալ 5 պետական ենթահամակարգերի ամբողջությունը.

- բնական միջավայրի վիճակի վերահսկողություն և մշտադիտարկում (մոնիտորինգ),
- տեղեկատվական և տեխնիկատնտեսական ենթահամակարգ, որը կապված է դիտարկման ընթացքում հավաքագրված տվյալների վերամշակման և վերլուծության հետ,
- բնական պաշարների օգտագործում, պահպանում և վերարտադրություն,

³ Стен Тамаркин А., Козаков Е., Беляев В., Социально-экономический механизм рационального освоения недр, „Экономическая политика и хозяйственная практика“, N3-4, 2000, էջ 73:

- փոխկապվածությունների ուսումնասիրում «հասարակական արտադրություն-բնական միջավայր» համակարգում,

- բնօգտագործման պլանավորում և կառավարում:

Ընդերքում առկա հարստությունների մասին մեր ունեցած գիտելիքների սակավության պատճառով ընդերքօգտագործման տեսության մեջ ընդունված է առանձնացնել *մասնակի* և *լրիվ յուրացված ընդերքի պաշարներ* հասկացությունները, որոնք երբեմն կոչվում են նաև արդյունաբերական: Արդյունաբերական են համարվում օգտագործման համար պիտանի, ոչ լրիվ հետազոտված բնական պաշարները:

Ընդերքի պաշարներն ավելանում են նոր հանքատեղերի հայտնաբերմամբ և, դրան զուգընթաց, պակասում են տնտեսության մեջ բնապահպանական պահանջների չկատարմամբ, անխնա օգտագործմամբ և արդյունահանմամբ:

1992 թվականի փետրվարի 25-ին ՀՀ-ում ընդունվեց օրենք «Ընդերքի մասին», որի նպատակն էր կարգավորել պետության և քաղաքացիների, ինչպես նաև ընդերք օգտագործողների իրավունքների պաշտպանությունը: Օրենքը կարգավորում էր պետական և մասնավոր սեփականության ձևերի միջև ծագող իրավունքները և պարտականությունները⁴:

ՀՀ-ում, 01.09.2011 թ. տվյալներով, մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոների թիվը 742 է, որոնցից մետաղային օգտակար հանածոների հանքավայրերինը՝ 32 (տե՛ս աղյուսակ 1), իսկ ոչ մետաղական օգտակար հանածոներինը՝ 712. դրանց գերակշիռ մասը գտնվում է Արարատյան գետահովտի և Արագածի նախալեռնային գոտու տարածքում: Օգտակար հանածոների արդյունահանման համար տրամադրված հանքային իրավունքները, առ 01.09.2011 թ., 505-ն են⁵:

Այսօր երկրի բյուջեում իր մասնաբաժնի առումով լեռնահանքային արդյունաբերությունը ամենամեծն է:

ՀՀ-ում հայտնի են մետաղական օգտակար հանածոների՝ պղնձի, մոլիբդենի, ոսկու, արծաթի, կապարի, ցինկի, երկաթի, վոլֆրամի և դրանց հարակից տարածված տարրերի բազմաթիվ՝ մի քանի հարյուր փոքր ու մեծ հանքավայրեր ու հանքաերևակումներ, որոնց՝ ընդերքի հարստություններից մի քանիսի՝ ոսկու, արծաթի, վոլֆրամի պաշարների ու ռեսուրսների մոտ կեսը կարող է բավարարել մեր հանրապետության պահանջները, իսկ մյուս մասը կարելի է արտահանել այլ երկրներ: Մյուս մետաղների՝ պղնձի, մոլիբդենի, կապարի, ցինկի, երկաթի և դրանց հետ կապված հարակից տարրերի՝ ռենիումի, սելենի, տելուրի, բիսմութի, գալիումի, գերմանիումի, կադմիումի, վանադիումի, մագնեզիումի, ինդիումի, տանտալի, իտրիումի, տիտանի, ցիրկոնիումի, նիոբիումի, թալիումի, ցերիումի, կոբալտի և այլնի պաշարներն ու ռեսուրսները կարող են բավարարել ՀՀ-ի նման մի քանի տասնյակ երկրների պահանջները, սակայն նշված մետաղներից շատերը՝ կապարը, ցինկը, երկաթը, վոլֆրամը և դրանց զուգակցվող հարակից տարրերը՝ ոսկին, արծաթը, կադմիումը, բիսմութը, սելենը, տելուրը, գերմանիու-

⁴ Տե՛ս **Ա. Մարկոսյան, Ս. Գավոյան, Հ. Մարգարյան**, Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում, Եր., «Տիգրան Մեծ», 2003, էջ 283:

⁵ Տե՛ս [URL:http://www.minenergy.am/hy/en/endorsharmer](http://www.minenergy.am/hy/en/endorsharmer) (մուտք 20.11.2011):

մը, գալիումը, ինդիումը, քալիումը և այլն, դեռևս չեն արդյունահանվում, չեն կորզվում, հետևապես և ՀՀ պահանջները ռազմավարական նշանակության այդ տարրերի գծով չեն բավարարվում⁶:

Աղյուսակ 1

ՀՀ տարածքի մետաղային օգտակար հանածոների հանքավայրերի ցուցակը 01.09.2011 թ. դրությամբ⁷

Հ/հ	Հանքավայրի անվանումը	Օգտակար հանածոն
1	2	3
1	Սոթքի կենտրոնական տեղամաս	ոսկի
2	Շորժայի	մագնեզիումախլիկատային ապարներ և քրոմիտներ
3	Թուխմանուկի կենտրոնական տեղ.	ոսկի
4	Մեղրաձորի ոսկի	ոսկի
5	Հանքավանի	մոլիբդեն
6	Աբովյանի	երկաթ
7	Հրագրանի	երկաթ
8	Մեղրաձորի ոսկու հանքավայրի «Լուսաջուր» տեղամաս	հանքաքար
9	Մդարքի	ոսկի
10	Արմանիսի	ոսկի
11	Շամլուղի պղնձի	պղինձ
12	Թեղուտի	պղինձ-մոլիբդեն
13	Ախթալայի	բարիտ-բազմամետաղ
14	Ալավերդու	պղինձ
15	Տանձուտի	ծծմբահրաքարային հանքավայրի ոսկեպարունակ օքսիդացման գոտի
16	Ագատեկի	ոսկի-բազմամետաղ
17	Գլաձորի /Գազմայի/	բազմամետաղ
18	Սոֆի Բինայի	ոսկի-բազմամետաղ
19	Ամուլսարի Տիգրանես տեղամաս	ոսկեբեր կվարցիտներ
20	Քաջարանի	պղինձ-մոլիբդեն
21	Տերտերասարի	ոսկի
22	Լիճվազ-Թեյի	ոսկի
23	Ագարակի	պղինձ-մոլիբդեն
24	Շահումյանի	ոսկի-բազմամետաղ
26	Լիճքի	պղինձ
27	Այգեձորի Թղկուտի տեղամաս	պղինձ
28	Կապանի (կենտրոնական)	պղինձ
29	Գաստակերտի	պղինձ-մոլիբդեն
30	Հանքասարի կենտրոնական տեղ.	պղինձ-մոլիբդեն
31	Բարձրադիրի	ոսկի
32	Այգեձորի կենտրոնական տեղ.	պղինձ-մոլիբդեն

⁶ Տե՛ս Հ. Ավագյան, Հայաստանի հանքահումքային ռեսուրսները, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2004, էջ 33:

⁷ URL:<http://www.minenergy.am/hy/en/endpasharner/minresdeposits-men> (մուտք 20.11.2011թ.):

ՀՀ պղնձամոլիբդենային հանքավայրերի պաշարները⁸

Հանքավայրերի անվանումները	Պ ա շ ա ր ն ե ր ը										
	Հանքա- քարերը B+C ₁ +C ₂ վն տ	Mo հազ. տ	Cu հազ.տ	Re տ	Au տ	Ag տ	Se տ	Te տ	Bi տ	Ge տ	W տ
Քաջարան	1958,7	730,70	4355,0	316,0	54,84	3055,6	3173,1	2644,2	3917,4	-	-
Ագարակ	43,954	11,91	203,0	11,0	1,10	52,5	150,9	26,8	88,0	4,30	-
Դաստակերտ	7,485	2,90	77,90	1,255	0,75	27,90	45,26	53,70	163,2	0,57	-
Թեղուտ	459,244	99,117	1630,0	120,71	4,776	304,0	342,91	75,23	սպյալներ չկան		
Այգեձոր	233,00	72,2	367,8	109,5	4,14	256,3	675,7	466,0	2027,1	6,372	-
Հանքավան	114,8	62,5	-	36,1	-	1,043	27,00	8,65	0,469	0,156	-
Հանքավան (սկառնային հանքայնացում)	22,461	-	134,8	1,654	31,90	111,6	223,24	65,59	11230,0	269,5	10478
Ընդամենը	2839,644	979,327	6768,5	596,219	97,506	3808,943	4638,11	3940,17	17426,169	280,898	10478

⁸ Հ. Ավագյան, Գլխ. աշխ., էջ 33:

Հաշվի առնելով, որ մետաղային օգտակար հանածոների հանքավայրերը համալիր բնույթի են, դրանց արժեքավորումը տրվել է ըստ հիմնական բաղադրամասերի՝ երկաթի, պղնձի, մոլիբդենի, կապարի, ցինկի, ոսկու և արծաթի: Առանձին հանքավայրերի հանքաքարի մեջ հանդիպում են նաև ցրված և հազվագյուտ մետաղներ՝ սելեն, տելուր, գալիում, ինդիում և այլն: Դրանք հաշվարկի մեջ չեն մտցվել: Նույն հանքաքարի կոմպլեքսային բնույթի պատճառով առանձնացվել են պղնձակուլչեղանային, պղնձամոլիբդենային, բազմամետաղային, ոսկու, բազմամետաղային ոսկու և երկաթաքարի հանքավայրի խմբեր⁹:

Մետաղական օգտակար հանածոների այժմ շահագործվող բոլոր հանքավայրերը՝ պղնձամոլիբդենային, պղինձ-հրաքարային, ոսկի-բազմամետաղային, ոսկի-սուլֆատային կազմավորման բոլոր հանքավայրերը շահագործվում են շատ ցածր արդյունավետությամբ, որն, ի դեպ, ընդերքի մասին առաջադրվող նոր օրենքը փորձում է կարգավորել: Այսօր թողարկվում են միայն կիսաարտադրանքներ (չհաշված մաքուր երկաթի գործարանում վերամշակվող մոլիբդենի խտանյութերը), որոնց պարունակած հիմնական մետաղները գնահատվում են շատ ցածր գնով, իսկ խտանյութեր անցած հիմնական տարրերին հարակից տարածված խիստ արժեքավոր տարրերը վաճառքի ժամանակ չեն գնահատվում, և դրանց արժեքները չեն փոխհատուցվում: Չի գնահատվում նույնիսկ այնպիսի արժեքավոր տարր, ինչպիսին մոլիբդենի հետ սերտորեն կապված և մոլիբդենից 130 անգամ թանկ ռենիումն է: Չեն գնահատվում և նվիրվում են խտանյութեր անցած սելենը, տելուրը, բիսմութը, կադմիումը, գալիումը, գերմանիումը, ինդիումը, ծծումբը, երկաթը և այլն: Չի կորզվում նաև Քաջարանի հանքավայրում տարածված սկանդիում մետաղը, և այդ բոլորը, ինչպես նաև դրանց 30-40 տոկոսի թերկորզման հետևանքով պոչամբարներ են թափվում հարյուրավոր և հազարավոր տոննաներով ծանր մետաղներ ու թունավոր տարրեր՝ առաջացնելով էկոլոգիական աղետներ:

Բոլոր մետաղական հանքավայրերն այսօր շահագործվում են բաց և պայթեցման եղանակով. դրա հետևանքով աղտոտվում են ՀՀ ջրային և հողային ռեսուրսները, իսկ ընկերությունները վնասները չեզոքացնելու նպատակով պետական բյուջե վճարում չեն կատարում: Նկատվում է նաև նշված տարածքներից էկոլոգիական միզրացիա, իսկ հաճախ մարդիկ շարունակում են բնակվել նման էկոլոգիական աղետի շեմին հասած տարածքներում:

Հանքաքարի արդյունահանումը և օգտակար հանածոների կորզումները դեռևս արդյունավետ կերպով չեն վերահսկվում: Խորհրդային իշխանության կողմից մշակված «5 րբ» ձևի տարեկան հաշվետվություններ լեռնահանքային ձեռնարկությունները դեռ չեն ներկայացնում: Հարկ է նշել, որ լեռնահանքային ձեռնարկությունները ստանում են սպասվող հասույթի մոտ 25 տոկոսը, իսկ մետալուրգիական ձեռնարկություններ ունենալու պարագայում դրանց հասույթը կարող է կրկնապատկվել և եռապատկվել՝

⁹ Տե՛ս Ա. Ավագյան, Հայաստանի Հանրապետության ընդերքի ռեսուրսների աշխարհագրական գնահատականը, Եր., «Երևանի համալսարանի հրատարակչություն», 2000, էջ 51:

հաշվի առնելով այն փաստը, որ այս տարվա սկզբից պղնձի գները համաշխարհային շուկայում աճ են արձանագրել և հասել 8850 ԱՄՆ դոլարի¹⁰:

ՀՀ-ում տնտեսական աճը և բնակչության բարեկեցությունը զգալի կախման մեջ են դրվել բնական ռեսուրսների շահագործումից, և ՀՆԱ աճ ապահովելու համար անխնա շահագործվում են ընդերքի հանածոները: Հանքարդյունահանման գործընթացները վտանգում են շրջակա բնական միջավայրն ու հարակից տարածքների մարդկանց առողջությունը, ինչպես նաև խոչընդոտում տնտեսության համար ազգային մրցունակության հեռանկար ունեցող այլ ճյուղերի՝ տուրիզմի և գյուղատնտեսության զարգացմանը: ՀՀ-ում արդեն իսկ գործում են 505 հանքարդյունահանման լիցենզիաներ: Եվս 202-ը ուսումնասիրության փուլում են և համապատասխան պաշարների բացահայտման դեպքում կտրամադրվեն շահագործման՝ առանց սահմանափակման¹¹: Հանքարդյունահանող ընկերություններն աշխատում են արտոնյալ պայմաններում՝ շրջակա միջավայրն աղտոտելու դիմաց ընդհանրապես չվճարելով:

ՀՀ Կառավարությունը, այս ամենով հանդերձ, քայլեր է ձեռնարկում՝ խթանելու գործարար միջավայրը հանքարդյունաբերության ոլորտում: Այստեղ առկա է նաև պարադոքսալ շրջանակներում երևույթ. չնայած հանքարդյունաբերությունը ՀՀ տնտեսության ամենաշահութաբեր ճյուղն է, գործում է ներկայիս հարկային դաշտում, շահագործողներն օգտվում են ավելացված արժեքի հարկ չվճարելու արտոնությունից: Ընդերք օգտագործող մասնավոր կազմակերպությունները ոչ միայն չեն վճարում ռենտա, այլև, մեծ մասշտաբների համեմատ, չեն հարկեր են վճարում պետական բյուջե:

Ինչ վերաբերում է «Ընդերքի մասին» առաջադրվող ՀՀ նոր օրենսգրքին, ապա փաստենք, որ հիմնականում տեղ են գտել հետևյալ փոփոխությունները.

1. Օրենքով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերք օգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցությունից պաշտպանելու, աշխատանքի կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերք օգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

2. Ռադիոակտիվ հումքի արդյունահանման նպատակով ընդերք օգտագործման առանձնահատկությունները սահմանվում են առանձին օրենքով:

3. Նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման առանձնահատկությունները սահմանվում են առանձին օրենքով:

4. Ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանման նպատակով ընդերք օգտագործման առանձնահատկությունները սահմանվում են ՀՀ ջրային օրենսգրքով:

¹⁰ Տե՛ս [URL:http://www.fx-commodities.ru/category/copper/](http://www.fx-commodities.ru/category/copper/) (մուտք 25.11.2011):

¹¹ Տե՛ս [URL:http://www.minenergy.am/hy/en/endpasharner/minresdeposits-men](http://www.minenergy.am/hy/en/endpasharner/minresdeposits-men) (մուտք 20.11.2011):

5. Քաղաքաշինական օբյեկտների (այդ թվում՝ ամբողջությամբ կամ մասնակի ստորերկրյա) նախագծման, ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների և կառուցապատման հետ կապված ընդերքօգտագործման հարաբերությունները սահմանվում են «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով և դրանց կիրառումն ապահովող իրավական ակտերով:

Այսօր ընդերքօգտագործողն իրավունք ունի սեփական միջոցների հաշվին կատարելու իրեն տրամադրված երկրաբանական տեղեկության անկախ փորձաքննություն: Եթե վերջինիս արդյունքում պարզվի, որ հանքավայրի երկրաբանատնտեսագիտական գնահատականը էապես փոխված է, ապա ընդերքօգտագործողը կարող է դիմել լիազոր մարմնին իր կողմից շահագործվող հանքավայրի պայմանադրության (կոնդիցիա) վերազնահատման, վերահիմնավորման ու օգտակար հանածոյի պաշարների ճշտման առաջարկով: Լիազոր մարմինը դիմումը պետք է քննարկի ու մեկամսյա ժամկետում որոշում ընդունի: Նշենք, որ ընդերքն օգտագործելիս կատարվում են հետևյալ վճարները՝ բնապահպանական, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն), դիտարկումային (մոնիթորինգ) ծրագրի իրականացման, բնօգտագործման՝ բացառությամբ մետաղական օգտակար հանածոների, ռոյալթի՝ մետաղական օգտակար հանածոների համար, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրք:

Ընդերքօգտագործման վճար չի պահանջվում նրանցից, ովքեր.

1. Սեփական կարիքների համար իրենց հատկացված հողամասի սահմաններում կատարում են ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանում, ինչպես նաև ստեղծում են կենցաղային նպատակով ստորերկրյա կառույցներ:

2. Առանց ընդերքի ամբողջականության խախտման իրականացնում են երկրաբանական ուսումնասիրություններ (հրաբխային և արտածին երկրաբանական դիտարկում): Ստեղծում են հնէաբանական գոյացություններ, բնության հուշարձաններ և պահպանում են դրանք: Բանի որ ընդերքը պետության սեփականությունն է, ուստի այն չի կարող առուվաճառքի, գրավի առարկա լինել կամ օտարվել այլ ձևով:

Սակայն օրենսգրքում հստակ չի սահմանվում *լեռնարդյունաբերության թափոններ* հասկացությունը, ինչպես նաև պարզ է դառնում, որ պոչամբարի համար ընդերքօգտագործողը հարկ չի վճարելու (այսօր հաշվվում է մոտ 30 պոչամբար): Թափոնների կուտակման վայրերը, դրանք օգտագործելուց հետո, թողնվում են պետության տնօրինությանը՝ փաստորեն հանքարդյունաբերողին ազատելով պատասխանատվությունից՝ թափոնների կառավարման, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա դրանց բացասական ազդեցության համար գումարներ վճարելուց: Փաստենք, որ 2008 թ. Կառավարությունում փորձեր կատարվեցին հանքարդյունաբերության թափոնները բերել հարկային դաշտ, և բնապահպանության նախարարությունն առաջարկեց 1 տոննայի համար 3 ՀՀ դրամ վճարել 48 հազար ՀՀ դրամի փոխարեն, այնուհետ 3 դրամը դարձավ 1 դրամ, որից հետո այդ գործընթացն անհասկանալի կամ հասկանալի պատճառներով սառեցվեց:

Համաշխարհային բանկի աջակցությամբ լրամշակված նոր օրենսգրքում, ընթացակարգերը պարզեցնելով հանդերձ, չեն առաջադրվում բնական պաշարները ողջամտորեն օգտագործելու նախադրյալներ, բնապահպանական սահմանափակումներ, աղտոտման դիմաց վճարման երաշխիքներ, ընդերքօգտագործողների ընտրության չափանիշներ, ինչպես նաև տեղեկատվության թափանցիկության ապահովման պարտավորություններ:

ՀՀ հանքարդյունաբերության ոլորտում կան հարկահավաքման, հարկային արդյունավետ վարչարարության խնդիրներ: ՀՀ Կառավարությունը փորձում է լուծել դրանք՝ հանքարդյունաբերողներին առաջարկելով տույժերի և տուգանքների ներում, եթե նրանք կազմեն պարտքի մարման ժամանակացույց և սկսեն մարել հարկային կուտակված պարտավորությունները: Սակայն այդ որոշման արդյունավետությունը կասկածելի է: Հանքարդյունաբերությունը ներկայումս այն ոլորտն է, որտեղ շեշտակի աճ է նկատվում: Դա պայմանավորված է միջազգային շուկայում գումավոր մետաղների գների աճով: 2008 թվականի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով գների կտրուկ անկում եղավ, և ՀՀ ձեռնարկությունները տուժեցին, սակայն, մինչև այդ, գները բավականին բարձրացել էին, և ձեռնարկությունները գերշահույթ էին ստանում. հիշենք Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի վաճառքը, երբ ձեռնարկությունը վաճառվեց, և աշխատանքի առաջին իսկ տարում նոր սեփականատերը ստացավ այնքան շահույթ, որքան վճարել էր կոմբինատը ձեռք բերելու համար: Հասկանալի է, թե ճգնաժամից առաջ շահութաբերության ինչ գերբարձր մակարդակով է աշխատել ոլորտը, հետևաբար՝ մոտ մեկ տարի տևած ճգնաժամային գնանկմանը շատ հանգիստ կարող էր դիմակայել՝ որպես ռեսուրս օգտագործելով մինչև այդ ստացած բարձր շահույթը: Այս ամենը հաշվի առնելով՝ վիճելի է Կառավարության կողմից ձեռնարկություններին հարկային պարտավորությունները չկատարելու տույժերից և տուգանքներից ազատելը, առավել ևս այն դեպքում, երբ այդ նույն մակարդակով է ընդունվում այն փաստը, որ ընդերքօգտագործման ոլորտում կան օրենսդրական բացեր, որոնք ընդերքօգտագործողներին հնարավորություն են տալիս խուսափելու համարժեք հարկեր և տուրքեր վճարելուց:

2012 թվականին նախատեսվում է հանքահումքային ոլորտից, 2011 թվականի համեմատությամբ, ավելին գանձել՝ մոտ 2-3 մլրդ ՀՀ դրամ: Կառավարությունը 2012 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, ակնկալում է 101 մլրդ ՀՀ դրամի հարկային մուտքերի ավելացում, և հիմնական աղբյուր է նշվում ընդերքօգտագործման ոլորտից հարկահավաքման ավելացումը:

Այս տարվա առաջին 9 ամիսների ընթացքում հանքահումքային ոլորտը ներկայացնող ձեռնարկությունների վճարած հարկերը և տուրքերը զգալիորեն աճել են: Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, «Դինո գոլդ մայնինգը», Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը, «Արմենիան քափր փրոգրը» և «ԳեոՊրոՄայնինգ գոլդ» ընկերությունները միասին վճարել են ավելի քան 29 միլիարդ դրամի հարկ ու տուրք, ինչը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կրկնապատիկից

ավելի է¹²: Կանխատեսվող բարձրացումները, մեր համոզմամբ, դեռևս սահմանային չեն. օրինակ՝ այսօր մեկ տոննա պղինձն արժե 8850 ԱՄՆ դոլար, իսկ, ըստ վիճակագրության վարչության տվյալների, 2010 թվականին արդյունահանվել է 118 հազար տոննա պղինձ, որն այս տարի ավելացել է 30 տոկոսով: Այսպիսով՝ 140 տոննան բազմապատկելով 8850-ով՝ կստացվի 1 միլիարդ 239 միլիոն ԱՄՆ դոլար (համեմատության համար նշենք, որ 2011 թվականի ՀՀ բյուջեն, դոլարային արտահայտությամբ, կազմում է մոտ 3 մլրդ ԱՄՆ դոլար): Թվերն ինքնին խոսում են, ուստի հարկահավաքման գումարը կարող է 29 միլիարդ դրամից շատ ավելի մեծ լինել:

Այսօր ընդերքօգտագործման ոլորտը շուտափույթ կարգավորման կարիք ունի, և դա միայն նոր օրենսգրքով հնարավոր չէ անել: Միգուցե ճիշտ կլինի հետազայում ընդերքի նախարարության ստեղծումը, որն ունենա փորձառու տնտեսագետներ, երկրաբան մասնագետներ, գեոդեզիստներ, ովքեր հսկողության տակ կպահեն բոլոր լեռնահանքային ձեռնարկությունների աշխատանքները: Մույն նախարարության ենթակայությամբ կարող է գործել հանքահարստացման տեխնոլոգիական լաբորատորիա, որը մշակումներ կկատարի հանքահարստացման ընթացքում կորզելի օգտակար բոլոր տարրերի կորզումների բարելավման առումով:

Անհրաժեշտ է նաև բարելավել ներդրումային միջավայրը՝ ստեղծելով մետալուրգիական ձեռնարկություններ, քանի որ ներկայումս լեռնահանքային ձեռնարկությունները ստանում են հավանական հասույթի 25 տոկոսը, իսկ մետալուրգիական գործարաններ ունենալու դեպքում այդ թիվը կարող է կրկնապատկվել և եռապատկվել:

АШОТ МАРДОЯН — *Современные проблемы государственного управления недрами в РА.*- В пределах статьи поднимаются существующие проблемы в сфере недропользования в РА, которые мешают эксплуатировать (использовать) эту сферу более продуктивно и целенаправленно. Особо представлены рентовые соотношения между государством - как собственником недр и пользователями полезных ископаемых, проблемы, которые в экономической теории пока не получили свои соответствующие комментарии.

Представлены также злоупотребления, вызванные в процессе эксплуатации металлических полезных ископаемых на территории РА, проявление равнодушия со стороны государства, и сделаны некоторые предложения в целях упорядочения сферы недропользования в РА.

ASHOT MARDOYAN — *Current State Governance Problems of the Underground Resources of the Republic of Armenia.*- The article discusses the major problems pertaining the field of the RA lithosphere resource management, which prevents a more effective and purposeful utilization of the resources. It particularly presents the rent relationships of the State as a proprietor of the lithosphere resources and the one using the minerals: this issue hasn't yet got its explanation in the field of Economics.

¹² Տե՛ս [URL:http://www.fx-commodities.ru/category/copper/](http://www.fx-commodities.ru/category/copper/) (մուտք 25.11.2011):

The article also discusses the abuses that emerge during the utilization of the RA metal minerals, as well as the indifference of the state bodies: certain suggestions and solutions are presented for the regulation of the sector.